

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(13 ապրիլի 1986 թ.)

«Խնդա եւ վուարճացիր, հարսնացեալդ Աստուծոյ եկեղեցի, քանզի ըզքեզ Տէրն Տերանց ընտրեաց եւ հաճեցաւ բնակիլ ի Քեզ» (շարական):

Սիրելի հաւատաւոր վաւակներ Մեր,

Այսօր Աշխարհամատրան կիրակին է:

Այսօր մեր մայր Եկեղեցին կը տօնախմբէ հիմնադրումը և կազմաւորումը քրիստոնէական Ընդհանրական սուրբ Եկեղեցւոյն:

Քրիստոսի Եկեղեցւոյ ծնունդը մեծագոյն երևոյթներէն մին կը հանդիսանայ մարդկութեան պատմութեան հորիզոնին վրայ:

Տիրոջ Յարութեան հրաշքը այն վէմն է, որուն վրայ աներեր կը բարձրանայ ոգեկան կառոյցը Սուրբ Եկեղեցւոյ, որ կը խորհրդանշէ իսկ մարմինը յարուցեալ Աստուածորդւոյն: Այդ ոգեկան կառոյցը հիօրագոյնը եղաւ պատմութեան կառոյցներու մէջ, որ կրցաւ դիմագրաւել ժամանակներու փոթորիկները և մնալ յաղթական:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին անբաժան մէկ մասն է քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցիին: Ան հիմնուեցաւ ու կազմակերպուեցաւ առաքելական աւանդութեանց վրայ, չորրորդ դարու լուսաբացին, մեծն Գրիգոր Լուսաւորչի սուրբ ձեռքով, Հայոց Հայրապետական Աթոռի հաստատմամբ ի Սուրբ Էջմիածին, Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատի պարիսպներուն տակ, սուրբգրական Արարատի ստորոտին:

Սուրբ Էջմիածնայ Աթոռով գլխաւորուած Եկեղեցին, հայ ազգի մայր Եկեղեցին է, երեկ, այսօր և յաւիտեան:

Հայ Եկեղեցին, Ընդհանրական Եկեղեցւոյ հարազատ ու վաւերական մէկ պատկերն է, հայ ազգի կեանքի սահմաններուն մէջ:

Հայ Եկեղեցին տիեզերական Եկեղեցին է՝ մարմին և հոգի առած հայոց ոգեկանութեան ստեղծարար ձևերուն մէջ:

Կը խորհինք թէ Արևմուտքի և Արևելքի քրիստոնէական առաքելաշաւիղ Եկեղեցիներու միջև կայ ներքին միութիւն մը՝ Քրիստոսով և Քրիստոսի մէջ, տեսակ մը խորհրդաւոր փոխադարձ ներթափանցում, որով ամէն մէկ ինքնագլուխ Եկեղեցւոյ մէջ կայ հարազատ պատկերը Ընդհանրական Եկեղեցւոյ: Այսպիսով Ընդհանրական կամ տիեզերական Եկեղեցին, իր իրական և ամբողջական գոյառումը կը գտնէ ու կ'արտայայտէ առաքելական ինքնագլուխ ուղղադաւան Եկեղեցիներու ամբողջութեան մէջ: Մեր օրերու էկումենիկ ոգին և շարժումը ուրիշ բան չեն, եթէ ոչ դրսևորումը և ամրապնդումը այդ ամբողջութեան, համաքրիստոնէական միութեան և եղբայրութեան:

Հայ Եկեղեցին ինքզինք բաժնուած չզգար Ընդհանրական Եկեղեցիէն, քրիստոնէական քոյր Եկեղեցիներու մեծ ընտանիքէն: Բնական է, կան որոշ դաւանաբանական բանաձևումներու երանգաւորումներ, կան ծիսական և ազգային աւանդութեանց հետ կապուած և ժամանակներու հոլովոյթով ձևաւորուած ինքնուրոյն դրսևորումներ, սակայն այդ բոլորը ոչ թէ կը բաժնեն, այլ մեկ աւելի կը միացնեն Ընդհանրական Եկեղեցիին, վի այդ բոլոր տարբեր դրսևորումները, տարբեր երանգաւորումները, հայ ազգի ոգեկանութեան յատուկ արտայայտութեան ձևերն են, որոնք աւելի կը հաստատեն տիեզերական ճշմարտութիւնը Քրիստոսի Եկեղեցւոյ:

Հայ ազգը Քրիստոսի Աւետարանը ընդունեց ոչ իբրև դուրսէն իրեն պարտադրուած ուսմունք, ոչ իբրև արտաքին զգեստ, ոչ իբրև ընդօրինակող, այլ իբրև երկնային պարգև մը՝ նաև իրեն ուղղակի շնորհուած, ի պատասխան իր սեփական հոգւոյ մեծ սպասումներուն և երազանքներուն: Ապացոյց որ հայոց Եկեղեցին միակն է քրիստոնէական Եկեղեցիներու ընտանիքին մէջ, որ իր հիմնադրումը և իր հայրապետական Աթոռի հաստատումը կապած է Միածին Որդւոյ ի Հայաստան էջքի տեսիլքին հետ: Ապացոյց նաև այն փաստը, որ հայ ժողովուրդը պատմութեան մէջ առաջինը կը հանդիսանայ քրիստոնէական կրօնը պետական կրօն հռչակող: Պատահական երևոյթներ չեն ասոնք:

Ահա թէ ինչու, Հայ Եկեղեցին իր ծննդեան օրէն մինչև այսօր, կայ ու կը մնայ աշխարհամատրան աստուածային կառոյցին մէջ, անբաժան ու աներ:

Սիրելի հաւատացեալներ, Հայ Եկեղեցւոյ ճակատագիրը կապուած է՝ մէկ կողմէ քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցւոյ ճակատագրին հետ և միւս կողմէ իր հարազատ սեփական ժողովուրդի ու հայրենիքի ճակատագրին հետ:

Մեր օրերու Ընդհանրական Եկեղեցին, այսինքն քրիստոնեայ Եկեղեցիներու մեծ ընտանիքը, համայն մարդկութեան հետ միատեղ կը գտնուի աշխարհակործան պատերազմի մը վտանգին առջև: Նոյն վտանգին տակ կը գտնուի նաև մեր Եկեղեցին, և մանաւանդ մեր Եկեղեցին, իր ժողովուրդով և իր վերածնած մայր երկրով:

Եւ եթէ Հայ Եկեղեցւոյ ճակատագիրը անբաժանօրէն կապուած է մէկ կողմէ Ընդհանրական Եկեղեցւոյ և միւս կողմէ իր սեփական ժողովուրդի ճակատագրին հետ, ապա պարզ է որ մեր Եկեղեցւոյ, յատկապէս հոգևորականներուս ուսերուն կը ծանրանայ պատուաբեր լուծը, նուիրական պարտականութիւնը ոչ միայն աղօթելու, այլև անյոգնաբեկ գործելու, մարտնչելու վասն պահպանման աշխարհի խաղաղութեան, վասն ընդհանուր, ամբողջական վինաթափման, վասն համերաշխ աշխարհի մը գոյատման և գոյատևման:

Այս խոհերը կը յաճախեն Մեր միտքը այս տարի մանաւանդ, երբ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը՝ 1986 տարին հռչակած է խաղաղութեան տարի:

Մենք՝ Հայ Եկեղեցի, մենք՝ հայ ազգութիւն, մենք՝ հայ հայրենիք, չենք կամենար որ աշխարհի վրայ տեղի ունենան ցեղասպանութիւններ, նման 1915-ի ցեղասպանութեան, որուն զոհ գնաց հայ ժողովուրդի կէսէն աւելին, Արևմտեան Հայաստանի տարածքին վրայ:

Մենք, Հայրապետ Հայոց, կը սպասենք որ արտասահմանի մեր պանդուխտ ժողովուրդը, հայրենաբնակ հայութեան կողքին կանգնած, ամէն բանէ վեր դաւանի հայ ազգի ու հայրենիքի ճակատագրի միասնութեան գիտակցութիւնը, գիտակցութիւն որ կրնայ կազմաւորուիլ միմիայն մեր արդի՝ ապրող ու շնչող և հասակ նետող հայկական պետութեան հաստատ ու ապահով հիմքի վրայ: Աղօթող ենք որ ոչ մէկ հայ մարդ դուրս մնայ մեր ազգային ճակատագրի միասնութեան այդ կենսահաստատ գիտակցութենէն: Վասնզի Սարդարապատի հերոսամարտը և Մայիս 28-ը կերտողներու իտէալները իրագործուեցան Նոյեմբեր 29-ի ճանապարհով: Վկայ մեր օրերու Հայաստանը իր վիթխարի իրագործումներով, մխիթարութիւնը և հպարտանքը համայն հայութեան:

Մենք կը հաւատանք նաև որ ինչ որ կը հասկնայ մեր ժողովուրդը հայ դատ ըսելով, հնարաւոր պիտի ըլլայ օր մը իրականացնել նոյն 29 Նոյեմբերեան ճանապարհով: Հեռու մեզմէ հայ դատ հետապնդել՝ հակադրուելով արդի ծաղկած մեր մայր հայրենիքին: Հեռու մեզմէ յանցապարտ յոյսեր կապել հնարաւոր պատերազմի մը սանձազերծման հետ, Արևմուտքի և Արևելքի միջև:

Հայոց մայր հայրենիքի և հետևաբար նաև Հայ Եկեղեցւոյ ճակատագրերը կը մնան ամրապէս խարսխուած ազգամիջեան համերաշխ գործակցութեան փրկարար հրամայականի յաղթանակի վրայ:

«Իսկ այժմիկ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի դուք որ երբեմն հեռաւորքն էիք՝ մերձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի: Զի նա է խաղաղութիւն մեր որ արար զերկոսեան մի .... Եւ եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց, և խաղաղութիւն՝ մերձաւորաց» (Եփես. Բ 13—14, 17): Ամէն: